ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ARMEPS ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ, ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ARMEPS/PPCM ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/29

ք.Երևան «25» դեկտեմբերի 2020թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից և «Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Տ. Ավագյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է էլեկտրոնային գնումների Armeps և էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության Armeps/ppcm համակարգերի ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների։

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը։ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը։

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին։

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է 99 600 000 (իննսունինը միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Պայմանագրի գինը 12 ամսվա ծառայության մատուցման արժեքն է: Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայության դիմաց, որի հաշվարկը կիրականացվի՝ հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 7.15 կետում նշված կնքվելիք համաձայնագրին կից վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[22] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

---

[22] Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման

ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ՝ 900011017523
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղար՝

---------- Վ. Հարությունյան
/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ազատության պողոտա 24/1
«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570069343740100
ՀՎՀՀ 00228737
Տնօրեն՝

---------- Տ. Ավագյան
/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 1
«25» դեկտեմբերի 2020թ. կնքված
«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/29 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	72261160/515	էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ*	դրամ	50 400 000	1	Ք. Երևան, Մելիք Ադամյան 1	Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցներ նախատեսվելու հիման վրա կողմերի միջև համաձայնագիրը կնքվելու օրվանից հետո 20-րդ օրվանից հաշված մինչև համաձայնագիրը կնքվելու տարվա դեկտեմբերի 20-ը:
2	72261160/516	էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության ARMEPS/PPCM համակարգի ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ**	դրամ	49 200 000	1	Ք. Երևան, Մելիք Ադամյան 1	Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցներ նախատեսվելու հիման վրա կողմերի միջև համաձայնագիրը կնքվելու օրվանից հետո 20-րդ օրվանից հաշված մինչև համաձայնագիրը կնքվելու տարվա դեկտեմբերի 20-ը:

*Չափաբաժին 1

Ներածություն

Պետական ոլորտի Արդիականացման Ծրագրի (PSMP) շրջանակներում Հանրապետության Հայաստանի կառավարությունը 2010 թվականին ներդրել է Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային գնումների համակարգը (ARMEPS): ARMEPS-ը հիմնված է ED-ի էլեկտրոնային պլատֆորմի վրա, որը հարմարեցվել է ՀՀ գնումների օրենսդրությանը համապատասխանելու համար և տեղայնացվել է հայերեն լեզվով օգտագործելու նպատակով:

Նկարագրությունը և նպատակը

Ամբողջապես համապատասխանելով ստանդարտ գործընթացին, որն անհրաժեշտ է ծրագրային ապահովման մանրամասն կիրառման համար, ARMEPS տեխնիկական սպասարկման համակարգը կգործի 3 մակարդակներում, որոնք իրենց հերթին կազմված են գործունեության հետևյալ տեսակներից:

- **1-ին մակարդակի սպասարկում (գործարար մակարդակ).**պատասխանել էլեկտրոնային նամակներին և հեռախոսազանգերին, վերլուծել միջադեպերը, ստուգել համապատասխան փաստաթղթերը, կատարել գրառումներ/թարմացումներ խնդիրների բացահայտման գործիքի միջոցով և դիտանցել միջադեպերի լուծումը: 1-ին մակարդակի սպասարկումն իրականացնելու է ՀՀ ֆինանսների նախարարությունը (Նախարարություն).
- **2-րդ մակարդակի սպասարկում (տեխնիկական մակարդակ) (24/7 ձևաչափով).**տեխնիկական խնդիրների լուծում, սարքավորումների կոնֆիգուրացիաներ, ծրագրային ուղղումների ներդրում և ցանցային/տեխնիկական խնդիրների հայտնաբերում.
- **3-րդ մակարդակի սպասարկում (ուղղիչ միջոցառումների իրականացման սպասարկում և 1-ին ու 2-րդ մակարդակների սպասարկման օժանդակություն).**սխալների վերացում, կոդերի թեստավորում, բարդիրավիճակների վերարտադրում, ծրագրային ապահովման ուղղումների ներդրման փաթեթների ստեղծում, փաստաթղթերի թարմացումներ:

Ծառայություններ մատուցողը պատասխանատու կլինի տեղական մակարդակով օպերատիվ արձագանքման 2-րդ և 3-րդ մակարդակների սպասարկման համար:

Ի լրումն տեխնիկական սպասարկման, անհրաժեշտ է իրականացնել էլեկտրոնային գնումների համակարգում որոշակի փոփոխություններ, որոնք մանրամասն ներկայացված են «Աշխատանքի շրջանակը» բաժնում:

Կիրարկման պայմաններ

Ծառայությունը մատուցողի տարածքում պետք է ստեղծվի փորձարկման միջավայր՝ միջադեպերի վերարտադրման, թերությունների հայտնաբերման և ծրագրային ուղղումների կամ ծրագրային ապահովման թարմացված տարբերակների փորձարկման համար: Ծառայություններ մատուցողին կտրամադրվի փորձարկման միջավայրի մուտքի իրավունք, որը հանդիսանում է ARMEPS արտադրական միջավայրի ճշգրիտ կրկնօրինակը:

Սպասարկման աշխատանքների իրականացման ընթացքում Ծառայություններ մատուցողի աշխատակազմին (որը կիրականացնի 2-րդ և 3-րդ մակարդակների սպասարկումը) հեռակակարգով կօժանդակի Նախարարությունը, որը կիրականացնի 1-ին մակարդակի սպասարկումը: 3-րդ մակարդակի սպասարկման համակարգին պետք է հասցեագրվեն բոլոր այն խնդիրները, որոնք պահանջում են միջամտություն ARMEPS-ի ծրագրային ապահովման առնչությամբ:

Աշխատանքի շրջանակը

Սույն Առաջադրանքի Պայմաններիիշրջանակներում Ծառայություններ մատուցողն ունի հետևյալ պարտավորությունները՝տեղական մակարդակով ARMEPS-ի օպերատիվ արձագանքման 2-րդ և 3-րդ մակարդակների սպասարկման առումով.

1. Վերլուծել միջադեպերը, վերարտադրել իրավիճակներ, ստուգել համապատասխան փաստաթղթերը.
2. Համակարգել տեխնիկական խնդիրները և դիտանցել դրանց լուծումները.
3. Վերլուծել թերությունները և դիտանցել նրանց լուծումը.
4. Լուծել ենթակառուցվածքի հետ կապված խնդիրները.
5. ARMEPS համակարգի գործունեության համար անհրաժեշտ հարակից սերվերների (DNS, MAIL, NTP) սպասարկումը.
6. Մտցնել կիրառման մեջ ծրագրային ուղղումները կամ նոր տարբերակները,
7. Իրականացնել ետնամասի (back-end) աջակցման աշխատանքներ.
8. Պատվիրատուի պահանջով ծրագրային ապահովման փոփոխման իրականացում՝ հաշվի առնելով հետևյալը՝
    - Փոփոխության հայցի բացահայտում և հաղորդակցում Նախարարության կողմից,
    - Առաջարկվող Փոփոխության հայցի ազդեցության վերլուծություն և այն չիրականացնելու ազդեցության գնահատում, փոփոխության հայցի իրականացման կանխատեսելի ժամկետները և արժեքը,
    - Փոփոխության հայցի իրականացման առաջարկվող պայմանների հաստատում Նախարարության կողմից,

Փոփոխման հայցի հաստատումից հետո անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը՝

- Ծառայություններ մատուցողի կողմից նախագծի պլանների համապատասխանեցում՝ միավորելու և Նախարարություն համաձայնեցված փոփոխությունները փոխանցելու համար՝ հավանություն ստանալու նպատակով.
- Ծառայություններ մատուցողի կողմից Փոփոխության հայցի ներդնում.
- Փոփոխության հայցի թեստավորում Ծառայություններ մատուցողի և Նախարարության կողմից.
- Նախարարության կողմից ընդունման որոշում (ընդունումը չպետք է հետաձգվի առանց պատճառների և ընդունման չափանիշը պետք է հստակորեն վերաբերի Փոփոխության Հայցի պահանջներին և ոչ որևէ նոր՝ չհստակեցված պահանջների).
- Ծառայություններ մատուցողի կողմից Փոփոխության Հայցի Գործարկում.
- Ծառայություններ մատուցողի և Նախարարության միջև նախապես գրավոր համաձայնեցված կարգով Փոփոխության հայցի ներդրման ծախսերի վճարում Նախարարության կողմից:

9. Վերլուծել պատահարները, վերարտադրել հանգամանքները, ստուգել համապատասխան ձեռնարկները:
10. Լուծել ենթակառուցվածքների կամ երրորդ կողմ հանդիսացող համակարգերի խնդիրները (միացումներ, ինտերնետ բրոուզերի խնդիրներ, վեբկայքերի ծրագրերի ընդհանուր կիրառում);

11. Գործարկել ծրագրերի նոր թողարկումները կամ ծրագրային փոփոխության ֆայլերը:

12. 2-րդ և 3-րդ մակարդակի սպասարկող անձնակազմը կգործի հեռահար եղանակով: 2-րդ և 3-րդ մակարդակի սպասարկող անձնակազմի գործողությունները ներառում են.

    - Պատասխանել տեխնիկական / ոչ գործառութային հայցերին, որոնք էլ-փոստի միջոցով կուղղորդվեն 1-ին մակարդակի սպասարկող անձնակազմի կողմից.
    - Գտնել և սահմանել գրանցված ծրագրային սխալները (ուղղիչ աշխատանքներ և տեխնիկական աջակցում).
    - Լուծել խնդիրները և վերարտադրել հանգամանքները.
    - Միջամտել (հեռահար կապի միջոցով) փուլ առ փուլ ընթացող ծրագրային միջավայրին և կատարել ծրագրերի տեղադրում/պարամետրերի սահմանում.
    - Կատարելթեստավորում.
    - Ստեղծել ծրագրային փոփոխության ֆայլեր և թողարկումներ.
    - Թարմացնել համապատասխան տեխնիկական ձեռնարկները:

3-րդ մակարդակի Սպասարկող անձնակազմը կգործի Ծառայություններ մատուցողի նախադրյալների համաձայն 07:00 – 20:00 ժամերի ընթացքում՝ տրամադրելով հեռահար տեխնիկական աջակցություն Նախարարության անձնակազմի համար: Ծառայություններ մատուցողը կպատասխանի հարցերին համապատասխան ստորև ներկայացված աղյուսակի:

Առաջնահերթություն	Արձագանքում (աշխատանքային օր)
Բարձր	1
Միջին	3
Ցածր	4

- **Բարձր**: Այս թերությունը պետք է վերացվի հաջորդող 1 աշխատանքային օրվա ընթացքում: Տվյալ դեպքը հիմնականում գրանցվում է, երբ համակարգի

ընդհանուր ֆունկցիոնալությունն արգելափակված է, և դրա արդյունքում ոչ մի գործողություն/գործառույթ հնարավոր չէ իրականացնել կամ համակարգի որևէ գործառույթ/ֆունկցիոնալություն համակարգի թերության պատճառով կիրառելի չէ այնպես, ինչպես նախատեսվում էր, կամ առկա է նոր կոդ գրելու անհրաժեշտություն, կամ որևէ միջավայրային խնդիր կա, որը պետք է լուծվի կոդի միջոցով:

- **Միջին**: Այս առաջնահերթությունն ունեցող թերությունը կարող է առնչվել ֆունկցիոնալության խնդիրներին, որոնք չեն համապատասխանում ակնկալիքներին: Նույնիսկ կոսմետիկ սխալները, ինչպիսիքենձախողմանըժամանակճիշտսխալի հաղորդագրությանը սպասելը, կարող է որակվել որպես 3-րդ առաջնահերթության թերություն:
- **Ցածր**: Ցածր առաջնահերթությամբ թերությունը մատնանշում է, որ անկասկած առկա է խնդիր, սակայն այն չունի հրատապ լուծման կարիք: Ցածր առաջնահերթություն ունեն նաև հարցեր դասակարգմամբ հայտերը:

Պատասխանները կպարունակեն տվյալ խնդրի լուծումը կամ առաջին գնահատումը հնարավոր պատճառների վերաբերյալ (ներառյալ շրջանցող լուծման տրամադրումը մինչև խնդրի վերջնական լուծումը) կամ էլ տվյալների (օրինակ՝ լոգ ֆայլեր) կամ հետագա պարզաբանումների վերաբերյալ հայցերը: 2-րդ և 3-րդ մակարդակի Սպասարկող անձնակազմը չպետք է ստանա պատահարների վերաբերյալ հայցեր հաճախորդի կողմից, որոնք պետք է ընդունվեն Սպասարկող անձնակազմի 1-ին մակարդակի կողմից (օրինակ՝ ենթակառուցվածքների տեխնիկական ձախողումներ, համակարգի թերությունների արդյունքում առաջացած պատահարներ, տվյալ բնագավառին վերաբերող գործառութային հայցեր և այլն): Միայն պատշաճ վերլուծված պատահարները, որոնք չեն լուծվել 1-ին մակարդակի Սպասարկող անձնակազմի կողմից և վերաբերում են 2-րդ և 3-րդ մակարդակին, պետք է փոխանցվեն համապատասխան Սպասարկող անձնակազմին:

13. Ինտերնետի միջոցով հեռահար կապ հաստատելու հնարավորությունը հասանելի կլինի Ծառայություններ մատուցողի միայն 2-րդ և 3-րդ աստիճանի Սպասարկող անձնակազմին, բոլոր սերվերների և ցանցային սարքերի համար, որոնք կազմում են Հայաստանի Էլեկտրոնային Գնումների (ARMEPS) Համակարգի արտադրական միջավայրի մասը:
14. Գնումների համակարգողների որակավորման քննության անցկացման ծրագրային ապասարկման ապահովում
15. Armeps համակարգի admin@armeps.am վճարովի էլեկտրոնային փոստի անվտանգության կարգաբերումների ապահովում, info@armeps.am կորպորատիվ էլեկտրոնային փոստի միջոցով համակարգի ավտոմատ և ոչ ավտոմատ ծանուցումների պատշաճ և անխափան առաքման ապահովում:
16. Իրականացնել ARMEPS-ի անխափան և չընդհատվող գործարկման համար անհրաժեշտ այլ գործողություններ:

Ծառայություններ մատուցողի հիմնական պարտականությունը միջադեպերի կառավարումն է, ինչն իրենից ներկայացնում է համակարգին վերաբերող ցանկացած պահանջի գրանցում, վերլուծում և հասցեագրում, որոնք հայտնաբերվել են արտադրական գործունեության (իրական ռեժիմում) ընթացքում: Պահանջին ընթացք տալու համար Ծառայություններ մատուցողի կողմից պետք է ձեռնարկվեն հետևյալ քայլերը.

- Միջադեպի հայտնաբերում և գրանցում Միջադեպերի Կառավարման Գործիքում.Միջադեպերը բացահայտվում են ARMEPS-ի օգտագործողների կողմից և դրանք հաղորդվում են Նախարարության կողմից գործարկվող 1-ին մակարդակի սպասարկման համակարգ՝Նախարարության կողմից միջադեպը արձանագրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում.
- Դասակարգում որպես Միջադեպ, Հարց, Փոփոխության Հայտ կամ Խնդիր,և ժամանակավոր լուծման առաջարկում, եթե դա հնարավոր է. Միջադեպը կա՛մ անմիջապես լուծում է տրվում սպասարկման համակարգի թիմի կողմից, կա՛մ փաստաթղթավորվում է հետագա գործողությունների համար: Երկրորդ դեպքում միջադեպը գնահատվում և դասակարգվում է Նախարարության կողմից գործարկվող 1-ին մակարդակի սպասարկման համակարգի կողմից կա՛մ որպես Խնդիր, կա՛մ որպես Փոփոխության Հայտ.
- Պահանջի հետաքննում և վերլուծություն. Խնդրի առկայության դեպքում միջադեպը փոխանցվում է Ծառայություններ մատուցողի կողմից գործարկվող օպերատիվ արձագանքման 2-րդ և 3-րդ մակարդակի սպասարկման համակարգ: Այնուհետև այն վերլուծվում է և հետաքննվում է խնդրի առաջացման պատճառը:.Հնարավոր պատճառները կարող են վերաբերել, օրինակ, ոչ պատշաճ օգտագործմանը, միացման անհնարինությանը, տեխնիկայի խափանմանը, ծրագրային թերություններին, գործարկման ընթացքում խափանումներին և այլն.
